# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

## Արջուտ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Արջուտ** | Ավագանու արտահերթ նիստ | 15.06.2021թ. | 11:00 | **Արջուտի համայնքապետարան** |

## ՕՐԱԿԱՐԳ

2021թ. հունիսի 15-ին՝ ժամը 11.00-ին Արջուտի համայնքապետարանի շենքում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

1.Արջուտ համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերման 2021 թվականի սուբվենցիոն ծրագրի վերաբերյալ:

Զեկ. Վ.Մկրտչյան

2.ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 08-ի թիվ 19-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Վ.Մկրտչյան

3.ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքում արխիվային գործի վարման կարգ հաստատելու մասին:

Զեկ. Վ.Մկրտչյան

4.Արջուտ համայնքի ավագանու 02.06.2021 թվականի թիվ 23-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Վ.Մկրտչյան

**ՆԱԽԱԳԻԾ -Ա**

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի նիստի օրակարգը՝

1.Արջուտ համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերման 2021 թվականի սուբվենցիոն ծրագրի վերաբերյալ:

2.ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 08-ի թիվ 19-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքում արխիվային գործի վարման կարգ հաստատելու մասին:

4.Արջուտ համայնքի ավագանու 02.06.2021 թվականի թիվ 23-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ՆԱԽԱԳԻԾ -Ա**

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ
ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ինչպես նաև այն հանգմանքը, որ տեղի է ունեցել տեխնիկայի շուկայական արժեքների փոփոխություն՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

<<Արջուտ համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերման>> ծրագրի իրականացման համար Արջուտ համայնքի բյուջեի միջոցների հաշվին ծրագրին ավելացնել 600 000 /վեց հարյուր հազար/ դրամ գումար:

**ՆԱԽԱԳԻԾ -Ն**

27

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
08-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 08-ի թիվ 19-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:

**ՆԱԽԱԳԻԾ -Ա**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ
ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքում արխիվային գործի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.2021 թվականի դրությամբ ժամանակավոր պահպանության ժամկետը լրացած համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության՝ մշտական պահպանության:

3.Համայնքի ղեկավարին՝ հետագայում պահպանել սույն կարգով սահմանված ժամկետում համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

**ՆԱԽԱԳԻԾ -Ա**

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
02.06.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 23-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 02-ի թիվ 23-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ վարձակալության տրամադրվող հողամասերի Լոտ 1-ը և Լոտ 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Լոտ 1-06-019-0104-0067 ծածկագրից, 3,72608 հա վարելահող, 20 տարի ժամկետով, 25 000 դրամ տարեկան վարձավճարով

Լոտ 2 - 06-019-0105-0188 ծածկագրից, 0,28661 հա արոտավայր, 20 տարի ժամկետով, 2 000 դրամ տարեկան վարձավճարով: